Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 4

**« ՀՀ ԷԵԲՊՆ-2017-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 21.12.2016թ.

ժամը՝ 11:00

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)

աշխատակազմի ղեկավարի տեղակալ Էդ. Շախկյան:

**Անդամներ՝**

Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)

աշխատակազմի համակարգչային տեխնիկայի բաժնի պետ Հ.Մելիքյան:

աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ն. Հակոբյան:

Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)

աշխատակազմի քարտուղարության գլխավոր մասնագետ՝ Ա.Ջուլհակյան:

աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ Ն. Բարսեղյան:

<<Մաքսիուր>> ՍՊԸ-ի լիազորված անձ Ա. Ասատրյան:

<<Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ-ի լիազորված անձ Յու. Եղոյան:

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Գնման Պատասխանատու/Մրցույթի Համակարգող(ԳՊ/ՄՀմ)

աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Ադոնց:

1. **Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

Ս/թ դեկտեմբերի 21-ին ժամը 11.00-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունում «ՀՀ ԷԵԲՊՆ-2017-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով կայացած մրցույթում <<Մաքսիուր>> ՍՊԸ-ն և <<Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնով ներկայացրել էին հավասար գնային առաջարկներ: Գների նվազեցման շուրջ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ

կետի 5-րդ ենթակետի բ) մասը 2016 թվականի դեկտեմբերի 21-ին ժամը 11.00-ին նշված մասնակիցները հրավիրվել են բանակցության: Բանակցությունների արդյունքում <<Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ-ի լիազորված անձի կողմից՝ Յու. Եղոյան, առաջարկվեց նոր գին՝ 7022400 (յոթ միլիոն քսաներկու հազար չորս հարյուր) դրամի փոխարեն սահմանել 6817200 (վեց միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր) դրամ:

**2. Հանձնաժողովը որոշեց՝**

**2.1.** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ կետը՝ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի և «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

**2.2.** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետը, ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ «Մաքսիոււ» ՍՊԸ-ին:

**2.3.** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը

ա)Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

բ) ծանուցել «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացնել հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Էդ. Շախկյան | ........................ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Հ. Մելիքյան | ........................ |
| | Ն. Հակոբյան | ........................ |
| | Ա. Ջուլհակյան | ........................ |
| | Ն. Բարսեղյան | ........................ |
| Քարտուղար՝ | Լ. Ադոնց | ........................ |
| | Ա. Ասատրյան | ________________ |
| | Յու. Եղոյան | ________________ |